ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 08
26 ՕԳՈՍՏՈՍԻ 2024թվական

ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 13 անդամներ:

Բացակա էին՝ Գուրգեն Գրիգորյանը, Սեդա Գրիգորյանը, Էդգար Համբարձումյանը, Ռոբերտ Հովսեփյանը, Արմինե Մեսրոպյանը, Ռուբեն Նալբանդյանը, Արայիկ Պարսամյանը, Աշոտ Սահակյանը

Նիստը վարում էր համայնքի ղեկավար՝ Արգիշտի Մեխակյանը

Նիստը արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Աննա Առաքելյանը

Լսեցին
ԱՎԱԳԱՆՈՒ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի վեցերորդ մասով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2024 թվականի օգոստոսի 26-ի թիվ 8 արտահերթ նիստի օրակարգը՝ համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 92-Ա/

Լսեցին
ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Արմավիրի մարզպետ Դ.Խուդաթյանի 2024 թվականի հուլիսի 3-ի թիվ 01/7/04877-2024 գրությամբ ներկայացված Հայաստանի Հանրապետության վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված Հայաստանի Հանրապետության համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի N 2/փ-269 եզրակացությունը և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ամբերդ գյուղի բնակիչ՝ Արաքսյա Աշոտի Մալխասյանի 2024 թվականի մարտի 14-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Ամբերդ գյուղի վարչական տարածքում գտնվող, Արաքսյա Աշոտի Մալխասյանի սեփականությունը հանդիսացող, 04-008-0117-0059 կադաստրային ծածկագրի, 0,1 հա գյուղատնտեսական նպատակային նշանակության կորիզավոր գործառնական նշանակության հողամասից 0,1 հա հողամասը փոխադրել բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության կատեգորիայի, բնակելի տուն կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար սահմանված վճարը կազմում է 381000(երեք հարյուր ութսունմեկ հազար) ՀՀ դրամ:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 93-Ա/

Լսեցին

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Խոյ համայնքին սեփականության իրավունքով պատկանող Հովտամեջ գյուղի վարչական տարածքում գտնվող թիվ 3 0,002 հա մակերեսով, բնակավայրերի նշանակության այլ հողեր գործառնական նշանակության հողամասը անհատույց օգտագործման

իրավունքով տրամադրելու <<Հայաստանի էլեկտրական ցանցեր>> փակ բաժնետիրական ընկերությանը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 94-Ա/

Լսեցին

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍԻ 10-Ի N 81-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով և <<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Արմավիր մարզի Խոյ համայնքին սեփականության իրավունքով պատկանող Աղավնատուն գյուղի վարչական տարածքում գտնվող d=159մմ L-105մ, d=108մմ L-340մ, d=76մմ L-174.5մ, d=89մմ L-758.5մ, d=57մմ L-7.55մ, d=57մմ L-7.6մ, L=463.45մ / 1-22/ , L=174.5 / 1-9/, L=223.8մ/1-12/,L152.75մ /1-7, L=7.55/1-2/, L=7.6մ/1-2/ , d=159մմ L-24մ, d=76մմ L-108.7մ, d=57մմ L-179,5մ, d=108մմ L-343մ, d=89մմ L-245մ, d= 219մմ L-34մ L=611.4մ/1-35/, L=322.8մ/1-23/, d=76մմ L-301,3մ, d=57մմ L-73.45մ, d=57մմ L-70.9մ, d=159մմ L-38մ, L=396մ/1-38/, L=3.3մ/1-2/, L=84.35մ/1-3/, d=76մմ L-260,0մ, d=89մմ L-476.5մ, d=159մմ L-13մ և L=749.5մ /1-46/ գազատարը անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու <<Գազպրոմ Արմենիա>> փակ բաժնետիրական ընկերությանը՝ շահագործման նպատակով:

2. ՈՒԺը կորցրած ճանաչել Խոյ համայնքի ավագանու 2023 թվականի հուլիսի 10 - ի <<Խոյ համայնքին սեփականության իրավունքով պատկանող գույքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրելու մասին>> թիվ 81-Ա որոշումը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 95-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԸ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 606 հոդվածով և 608-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Մրցութային կարգով վարձակալության իրավունքով օգտագործման տրամադրել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի սեփականություն հանդիսացող Արագած գյուղի 19-րդ փողոց 1 հասցեում գտնվող 04-014-0041-0008 ծածկագրով, բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման հողամասով համայնքապետարանի շենքի առաջին հարկի 76,9 քմ սենյակը՝ 10 տարի ժամկետով, վարձավճարի մեկնարկային գինը սահմանել տարեկան 800000 դրամ:

2. Մասնակցության վճարը՝ 15000 /տասնհինգ հազար/ ՀՀ դրամ: Նախավճարը սահմանել նախնական գնի 5 %-ը: Սահմանափակումներ չկան:

3. Տարածքի յուրաքանչյուր լոտի համար յուրաքանչյուր քայլը սահմանել նախնական գնի նվազագույնը 5 %-ի չափով:

4.Համայնքի ղեկավարին՝ Արգիշտի Մեխակյանին, իրականացնել սույն որոշումից բխող համապատասխան գործառույթներ՝ օրենքով սահմանված կարգով:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 96-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Ոսկան Ռուբիկի Զաքարյանի 2024 թվականի օգոստոսի 12-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Շահումյան գյուղի վարչական տարածքում գտնվող, Ոսկան Ռուբիկի Զաքարյանի սեփականությունը հանդիսացող, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, 04-077-0214-0008 կադաստրային ծածկագրի, 0,2633 հա-ից 0,0686 հա հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական

նշանակության հողերի կատեգորիայի՝ ծածկոց, ջրավազան,խորդանոց և պարիսպ կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար վճար չի սահմանվում:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 97-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Ռոբերտ Էդիկի Կարապետյանի 2024 թվականի օգոստոսի 6-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Արշալույս գյուղի վարչական տարածքում գտնվող, Ռոբերտ Էդիկի Կարապետյանի սեփականությունը հանդիսացող, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը՝ բնակելի կառուցապատման, 04-021-0095-0025 կադաստրային ծածկագրի, 0,0803 հա հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողերի կատեգորիայի՝ ջերմոց կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար վճար չի սահմանվում:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 98-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ԹԻՎ 74-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին

կետով, 37-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով Կարեն Սուրիկի Հարությունյանի 2024 թվականի մայիսի 29-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Դաշտ գյուղի վարչական տարածքում գտնվող, Կարեն Սուրիկի Հարությունյանի սեփականությունը հանդիսացող, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, 04-037-0113-0020 կադաստրային ծածկագրի, 0,1223 հա հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողերի կատեգորիայի՝ օժանդակ շինություն, ծածկ, ջրավազան և պարիսպ կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար վճար չի սահմանվում:

3. ՈՒժը կորցրած ճանաչել Խոյ համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 26 - ի <<Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին>> թիվ 74-Ա որոշումը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 99-Ա/

Լսեցին

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի <<ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԵՆԱՄՅԱ ԳՈՒՅՔԱԳՐՄԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N45-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 32-րդ կետով և 77-րդ հոդվածի 3-րդ կետով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետով և 34-րդ հոդվածի 1-ին կետով.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Խոյ համայնքի ավագանու 2024 թվականի ապրիլի 12-ի « Խոյ համայնքի սեփականության ամենամյա գույքագրման փաստաթղթերը հաստատելու մասին» N45- Ա որոշման մեջ կատարել փոփոխություն՝ որոշման թիվ 20 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 100-Ա/

Լսեցին

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ /ՄՇՏԱԿԱՆ/ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ <<ԷՋՄԻԱԾԻՆ>> ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 685-687-րդ հոդվածով, հիմք ընդունելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23052024-04-0027, 23052024-04-0061, 01072024-04-0020 վկայականները և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Խոյ համայնքի համայնքային սեփականություն հանդիսացող անշարժ գույքը, որոնց վրա առկա է խորքային հոր /մշտական/ օգտագործման իրավունքով տրամադրել «Էջմիածին» ջրօգտագործողներ ընկերությանը:

ա)Գույքի գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք, գյուղ Գեղակերտ1 խորքային հոր
Ծածկագիրը ՝ 04-087-0904-0001
Մակերեսի չափը՝ 0.00355 հա
Նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ այլ հողատեսք

բ) Գույքի գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք, գյուղ Հայթաղ Ա.Առաքելյան փողոց 78
Ծածկագիրը ՝ 04-055-0542-0002
Մակերեսի չափը՝ 0.00406 հա
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ ընդհանուր օգտագործման

գ) Գույքի գտնվելու վայրը՝ Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնք, գյուղ Արշալույս 4-րդփողոց 2/1
Ծածկագիրը ՝ 04-021-0846-0002
Մակերեսի չափը՝ 0.00423 հա
Նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի
Գործառնական նշանակությունը կամ հողատեսքը՝ այլ հողեր

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնհինգօրյա ժամկետում ապահովել «Էջմիածին» ջրօգտագործողներ ընկերության հետ որոշմամբ նշված գույքի անհատույց օգտագործման մասին պայմանագրի կնքումը՝ պայմանագրի նոտարական վավերացմամբ և պայմանագրից բխող գույքային իրավունքների պետական գրանցմամբ:

3.Սույն որոշման 2-րդ կետում նշված գործընթացի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման 1-ին կետով նշված գույքի հանձնման-ընդունման աշխատանքներ կատարումը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 101-Ա/

Լսեցին

ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230 րդ հոդվածի երրորդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետութան օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Խոյ համայնքի ավագանու 2024 թվականի հունվարի 26-ի թիվ 06-Ա որոշումը, բնակիչներից ստացված դիմումները և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Սահմանել անշարժ գույքի հարկի տույժերի գծով արտոնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի վարչական տարածքում գտնվող գյուղատնտեսական նշանակության հողեր ունեցող ֆիզիկական անձանց նկատմամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 102-Ա/

Լսեցին

ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի <<ՀԱՄԱՅՆՔԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՆ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ>> N 168- Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետով, <<Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածով և 34-րդ հոդվածի առաջին մասով, ինչպես նաև «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասով և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 27-ի «Համայնքի 2024 թվականի բյուջեի հաստատելու մասին» թիվ 168-Ն որոշման մեջ կատարել լրացումներ և փոփոխություններ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 103-Ն/

Լսեցին

ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՊԱՐԳԵՎԱՏՐՈՒՄ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով այն, որ Խոյ համայնքի ղեկավար Արգիշտի Մեխակյանը իր պարտականությունները կատարել է բարեխղճորեն, ինչպես նաև ավագանու անդամ Արտակ Պետրոսյանի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ղեկավար Արգիշտի Մեխակի Մեխակյանին տրամադրել միանվագ դրամական պարգևատրում մեկ ամսվա աշխատավարձի չափով՝ 584000 / հինգ հարյուր ութսունչորս հազար/ ՀՀ դրամ:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 104-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ԹԻՎ 72-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ

հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով Մանուկ Վահանի Զաքարյանի 2024 թվականի հունիսի 12-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Դողս գյուղի վարչական տարածքում գտնվող, Մանուկ Վահանի Զաքարյանի, Արման Վահանի Զաքարյանի, Գևորգ Վահանի Զաքարյանի,Ամալյա Գարուշի Զաքարյանի և Վահան Մանուկի Զաքարյանի ընդհանուր համատեղ սեփականությունը հանդիսացող, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահող, 04-038-0113-0014 կադաստրային ծածկագրի, 0,56 հա հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների գործառնական նշանակության հողերի կատեգորիայի՝ ջերմոց կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար վճար չի սահմանվում:

3. ՈՒԺը կորցրած ճանաչել Խոյ համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 26 - ի <<Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին>> թիվ 72-Ա որոշումը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 105-Ա/

Լսեցին

ՀՈՂԱՄԱՍԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 26-Ի ԹԻՎ 75-Ա ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 7-րդ հոդվածով, <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով,<<Նորմատիվ իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով, 37-րդ հոդվածի 1-ին կետով, հիմք ընդունելով Լիդա Վարդանի Մաիլյանի 2024 թվականի մայիսի 20-ի դիմումը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի Շահումյան գյուղի վարչական տարածքում գտնվող, Լիդա Վարդանի Մաիլյանի սեփականությունը հանդիսացող, նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը՝ վարելահո, 04-077-0214-0006 կադաստրային ծածկագրի, 0,0967 հա հողամասը փոխադրել արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության, գյուղատնտեսական արտադրական օբյեկտների

գործառնական նշանակության հողերի կատեգորիայի՝ հանգստի սենյակ, ջերմոց և ծածկոց կառուցելու նպատակով:

2. Փոփոխման արդյունքում առաջացած հողամասի համար վճար չի սահմանվում:

3. ՈՒԺը կորցրած ճանաչել Խոյ համայնքի ավագանու 2024 թվականի հունիսի 26 - ի <<Հողամասի նպատակային նշանակությունը փոփոխելու մասին>> թիվ 75-Ա որոշումը:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 106-Ա/

Լսեցին
ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՑՈՒՑԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով Խոյ համայնքի «Մշակույթի և սպորտի կենտրոն» ՀՈԱԿ-ի տնօրեն Ռոբերտ Շահբազյանի գրությունը և համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի «Մշակույթի և սպորտի կենտրոն» ՀՈԱԿ-ի Ծաղկալանջ և Հայթաղ բնակավայրերում գործող Մուայթայի խմբերի մարզիկներ ՝ Գևորգ Սիմոնյանին և Վաչիկ Միքայելյանին, յուրաքանչյուրին միանվագ տրամադրել 200000 / երկու հարյուր հազար / ՀՀ դրամ ֆինանսական աջակցություն՝ 2024 թվականի սեպտեմբերի 8-ից մինչև 20-ը մասնակցելու Թալիանդի մայրաքաղաք Բանկոգում անցկացվելիք պատանիների աշխարհի առաջնությանը:

2.Ֆինանսական աջակցության վճարումը կատարել Խոյ համայնքի բյուջեի սոցիալական ֆոնդի միջոցների հաշվին:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 107-Ա/

Լսեցին
ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի առաջին մասի 12-րդ կետով և երրորդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետութան օրենքի 18-րդ հոդվածի

առաջին մասի 42-րդ կետով, հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկությունը.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1.Սահմանել անշարժ գույքի հարկի գծով արտոնություն Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի բնակիչների ՝Հայաստանի Հանրապետության պաշտպանության մարտական գործողությունների ընթացքում զոհված կամ ծառայողական պարտականությունները կատարելիս անհայտ կորած կամ անհայտ բացակայող կամ մահացած ճանաչված անձանց (կամ նրանց ընտանիքի անդամներին) սեփականության իրավունքով պատկանող հարկման օբյեկտ համարվող անշարժ գույքերի նկատմամբ՝ համաձայն հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 108-Ա/

Լսեցին

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԽՈՅ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄԻՆ ԻՐ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՈՎ ԱՌԱՋԱՑԱԾ ԾԱԽՍԵՐԻ ԴԻՄԱՑ ԱՄՍԱԿԱՆ ԴՐԱՄԱԿԱՆ ՓՈԽՀԱՏՈՒՑՈՒՄ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասով, «Պետական պաշտոններ և պետական ծառայության պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 11-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու անդամ Սոֆիկ Միրզախանյանի առաջարկությունը Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու անդամին իր պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց ամսական դրամական փոխհատուցում տրամադրելու մասին.

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՆ ՈՐՈՇՈՒՄ Է՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Խոյ համայնքի ավագանու անդամներին իրենց պարտականությունների կատարման հետևանքով առաջացած ծախսերի դիմաց Խոյ համայնքի բյուջեով նախատեսված համապատասխան գումարներից տրամադրել ամսական դրամական փոխհատուցում՝ համաձայն կից հավելվածի:

Կողմ-13 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 109-Ա/

Ավագանու անդամներ

ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ

ԼՅՈՒԴՎԻԿ ՅԱՅԼՈՅԱՆ

ՀՐԱՅՐ ԱՍԱՏՐՅԱՆ

ԱՆՆԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ԼՈՒՍԻՆԵ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՎԱՉԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ԼՅՈՒԴՎԻԿ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼԻԼԻԹ ԵՆԳԻԲԱՐՅԱՆ

ՍՈՖԻԱ ՄԻՐԶԱԽԱՆՅԱՆ

ԱՐՏԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ԼԻԶԱ ՌԱՊՅԱՆ

ԻՐԻՆԱ ՍԻՐՈՒՆՅԱՆ

ԱՐՄԱՆ ՍՏԵՓԱՆՅԱՆ

Համայնքի ղեկավար

ԱՐԳԻՇՏԻ ՄԵԽԱԿՅԱՆ _____

Նիստն արձանագրեց՝ Աննա Առաքելյանը _____